ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"26" փետրվար 2013թ.

№ 17-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2005թ. փետրվարի 11-ի N 9 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացության, որոշում եմ.

1. <<Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված հատկացումների հաշվին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի բնակիչ Լևոն Համբարձումյանին հատկացնել օգնություն, գումարով 100.0 /մեկ հարյուր/ հազար դրամ:

2. Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. փետրվարի 26
ք. Կապան